

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանեանի խանութում

Ստամբուլում գրվում են ուղղակի

Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՆ ԲԱՆՔԱՐԵՏԱՃԵՑ ԹՅՂԿԱՏՐԵԼ ԴԵՂ ԵԿՈՂ 1878 ԹՎԻՑ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ „ՄԵՆԿ“ ԼՐԱՎԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ (Բացի տօն և նրանց հետևող օրերից):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի հոգնեմք. — Ներքին տեսութիւն: «ԲՈՅՈՇԵՆ» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին Մի քանի խօսք գործակաւորների ընկերութեան մասին: Նամակ երեւանից: Նամակ Սարկովից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Անգլիա: Ֆրանսիա: Արտաքին լուրեր: Սառն լուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Ֆելիետօն:

ԻՆՁԻ ԶՈՒՆԵՆՔ

Ընթերցողի ուշադրութիւնը դարձնելով ներկայ համարի ներքին տեսութեան մէջ տպված Երևանից ստացած նամակի վրա, աւելորդ չենք համարում մեր կողմից մի քանի խորհրդածութիւններ անել մեր թիֆլիս քաղաքի պոլիցիայի վրա:

Ի՞նչ է պատճառը որ Երևանի պէս գաւառական քաղաք կարող է օրինաւոր կազմակերպութեամբ պոլիցիա ունենալ, իսկ Կովկասեան մայրաքաղաքը զրկված է այդ շնորհից....

Եթէ ընթերցողը կարդալով ներկայ համարի մէջ տպված Երևանի նամակը, լաւ ուշադրութիւն դարձրեց նրա բովանդակութեան վրա, — նա անշուշտ հասկացած կը լինի թէ ինչ է կազմում երևանեան պոլիցիայի կազմակերպութեան

ՖԵԼԻԵՏՈՆ

Տխուր տարի. — Յուրաքանչեւ մեր քնքոյն սեռը: — Մեր ներքին ազգային կեանքը: — Հայոց աւուր թարգմանչէն է: — Հայաստան և հայեր: — Հայերից ծագած երեւելի մարդիկ: — Հայոց զօրայեանները և վարդապետ զօր: — Մենք ինչ ենք անում: — Մեր լրագրի մասին: — Ինչպէս է վերջանում ներկայ 1877 թիւը և ներկայ տարվայ տեսութիւնը: — Թիֆլիսի ներքին կեանքը և մեր աւագակութիւնները: — Մեր աւագակները մասնակցութիւն են ցուցնում: — Իշխան Բերբերովի: — Նամակ: — Եթէ ևս պոլիցիայի մասին լինէր: — Տառ: Յուրեղեմ: — Իմ այս տարվայ հրաժարականը:

Կարճեալ մի տարի վերջանում է, — բայց ինչպէս է վերջանում... Շատ տխուր կերպով պատերազմ, հիւանդութիւններ, ցուրտ, մահկանացութիւն, սով, աւազակութիւններ... Տխուր տարի է, այո:

Ցուրտը այնքան սաստիկ է, որ ես կասկածում եմ թէ կայ մինչև անգամ մի քաղաքական պատճառ այդ ցրտի համար: Երևանից մինչ

թեան ոյժը: Նրա ոյժը նորանում է կայանում, որ նա հիմնվում է իր ամբողջ կազմակերպութեամբ, իր ձեւերով տեղական տարրի վրա: Պոլիցիականներ, որոնք իրանք բնիկներ են, տեղական լեզուներ գիտեն, շրջում են ամեն տեղ, մինչև անգամ ռաւիկի շրջերը հազած մտնում են ամեն տեղ, պտտում են ամեն շրջաններում, ծանօթանում են կասկածաւոր անձանց հետ, հիմնում են իրանց գիշերային կարգապահութիւնը տեղացիներից ընտրված հասանների (գիշերապահների) հրահրութեան վրա, — ահա հաստատ հիմք ունեցող պոլիցիական վարչութիւն:

Պոլիցիան այնպիսի հիմնարկութիւն է, որ իր գործը օրինաւոր կերպով կատարելու, իր նպատակին հասնելու համար, նրա ներկայացուցիչները անպատճառ պէտք է խոր արմատներ գցեն ժողովրդի մէջ, պէտք է կապեր ունենան տեղական ժողովրդի ամեն դասակարգերի հետ:

Երկրորդ պայմանը լաւ կազմակերպված պոլիցիայի այն է, որ պոլիցիական պաշտօնականներ պէտք է անպատճառ մեծ ուժիկներ ստանան, որպէս զի անհնարին լինէր գայթակղեցնել նրանց որ և է ընծաներով:

Մեր կարծիքով թիֆլիսի մէջ վերջին ժամանակները աւելի յաճախ պատահող զանազան սպանութիւններ, աւազակութիւններ և գողութիւններ այն պատճառով անպատիժ են մնում, որ մեր պոլիցիան, որքան բարեխղճաբար և կատարէր իր պարտաւորութիւնը, բաւական չէ մօտենում տեղական

կամ Ռուսաստանից է գալիս այդ ցուրտը, որովհետեւ հիւսիսային հովան յաղթող է հանդիսացել արեւելեան տաք բնաւորութիւն ունեցող մահմետականի վրա, կամ այդ ցուրտը գալիս է սարսուղ Հայաստանից, որ այս րօպէիս էլ ոչինչ քաղաքական սահմանով բաժանված չէ Անգլիկանից:

Թիֆլիսում ցուրտը այնքան սաստիկ էր, որ մի քանի օր շարունակ թիֆլիցիները թալիքներով էին ման գալիս: Իսկ ոտով մանկեղծները մի դարմանով տեսարան էին ներկայացնում: Ձիւնին և սառուցին անսովոր հարաւային բնակիչը և մանաւանդ մեր տաք երկրի գեղեցիկ, քնքոյն սեռի ներկայացուցիչները ամեն քայլի վրա սըղթում էին և փութում էին գետնի վրա....

Այս ցուրտը այնքան սաստիկ է որ կարծես աղբեղցութիւն է ունեցել և մեր ազգային գործերի վրա, և մեր բոլոր գործերն էլ սառել են: Համարեմք առաջ մեր ազգային կեանքը միշտ հարուստ նիւթ էր առաջարկում ֆելիետօնիստի համար, — իսկ այժմ էլ ոչ ինչ նիւթ չը կայ: Այն ներսեան ուսումնարանի, ոչ նրա երեւելի ուսուցիչների և տեսուչների վրա մի խօսք ենք լրտում, ոչ ուրիշ դպրոցների վրա է խօսվում, ոչ էլ մեր լրագրութեան մասին մի խօսք է յիշատակվում.... Այո, ամեն բան սառած է կարծես:

տարրին, նրանից օգուտ չէ քաղում այն չափով որ հարկաւոր կը լինէր, չէ աշխատում մեր բոլոր, մինչև անգամ ամենաստոր դասակարգերի շրջանները մտնելու:

Եւ մեն տեսակ վարչութիւն, աղմիստրացիա կարող է կազմել օտար, դրսի մարդիկներից և այդպէս կազմված նա գուցէ աւելի կատարեալ է լինում, — բայց պոլիցիան այն հիմնարկութիւնն է, որ ամեն երկիրներում այն ժամանակն է միայն աջողվում, երբ նրա գոնէ գլխաւոր կօնսոխդէստը կազմված է լինում բուն տեղացի տարրերից, երբ նա հիմնվում է տեղական յատկութիւնների, բարք ու վարքի, սովորութիւնների վրա, երբ նա խոր արմատներ է գցում գլխաւորապէս քաղաքի բնակիչների ամենաստոր դասակարգերի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՅՈՇԵՆ «ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻՒՎԱՐՍԻ

Ինչպէս Վշակի անցեալ համարում յիշեցինք «ԲՈՅՈՇԵՆ» լրագրում տպված էր պ. Միքէլեանի թղթակցութիւնը գլխաւոր բանակից հայերի մասին Ահա մեր ընթերցողներին ծանօթացնում ենք դրա բովանդակութեան հետ: Վերջ և կէս ամիս պատերազմում էինք Իվանյի-փաշայի երեսուն և հինգ հազար մարդուց բաղկացած զորաբանակի դէմ, և օգոստոսի 15-ի և 18-ի, սեպտեմբերի 8-ի և հոկտեմբերի 15-ի կռիւները մեզ համոզեցին որ Իվանյի-փաշային այնպիսի չնչին զօրքով որ երևանեան մասն ունէր անկարելի էր հաղթել: Մեզ բուրբերը

Բայց եթէ մի կողմից հայոց հասարակութեան ներքին կեանքը կարծես սպառվել է, — ուրիշ կողմից հայոց ազգի անունը այս տարի ամբողջ աշխարհում մեծ նշանակութիւն է ստացել: Ի՞նչ լրագիր ուղում էք բաց արեք, — ամեն տեղ կը գտնեք հայերի և Հայաստանի անունը: Այժմ հայերի և Հայաստանի վրա գրում է ամբողջ աշխարհը, գրում են ամբողջ աշխարհի լրագիրները: անգլիական, ռուսաց, ֆրանսիական, գերմանական, իտալական և մինչև անգամ վրաց լրագրութիւնը մեզ պատիւ է անում մեր անունը յիշելու.... Հայաստանի վրա խօսում են ինչպէս Բուլղարիայի վրա:

Այդ բաւական չէ հայերը յայտնվեցան որպէս երեւելի գիտնորներ, նշանաւոր զօրագետներ: Այն ազգը որ յայտնի էր որպէս գիտնորական ոգի կորցրած, առեւտրական ժողովուրդ, այժմ յայտնեց որ բոլորովին չէ կորցրել իր գիտնորական հնարարական ոգին: Լորիս-Մելիքով, Լազարով, Շէլիֆով, Տէր-Ղուկասով, Ալիսաղով, Գէորգիով և ուրիշ շատեր, աւելի փոքր աստիճան ունեցող քաջեր ապացուցին մեզ որ նրանց մէջ վարդան Մամիկոնեանի ոգին դեռ կենդանի է:

Եւ անհաւատիկ երբ հայի վրա ակամայ սկսեցին ուշադրութիւն դարձնել, — մարդիկ նոր են սկսել յիշել թէ պատմական իրողութիւններ, որ-

դաւանանքներ, մեզ թիւրքերը դաւանեցին, մի խօսքով մեր դէմ ապստամբեց ամբողջ մահմետական ազգաբնակութիւնը: Մեզ սպառնում էր ներքին պատերազմի վտանգաւոր թոյնը որովհետեւ պատերազմական բեմի ազգաբնակութեան մեծ մասը կրօնով մահմետական են և առաւելապէս քուրդեր և թաթարներ:

Դուք կարելի է կը հարցնեք՝ բայց միթէ քրիստոնեայ ազգաբնակութիւնը, հայերը, չէին կարող թուրքները մեր թշնամի քուրդերի և թաթարների դործողութիւնները Միթէ հին Հայաստանի չորս միլիոն ազգաբնակութիւնը չէր կարող մեզ այն ծառայութեան անսերտորդ մասն անել ինչ որ արեց տաճկաց վաղցիների փոքր խումբը օսմաններին: Ցաւով սրտի պէտք է խոստովանել որ հայերի դէպի մեզ համակրութիւնը արտայայտվում էր միայն նրանով որ նրանք մեր զօրքերին աջ ձեռով մօտ բերելով աղ ու հացը, ձախ ձեռով հանում էին իրանց ոչնաւի ցիլինդրաձեւ փափախները խնդրելով գցել նրանց մէջ ոսկէ կամարձաթեայ փողեր: Ես զարմանում եմ ռուսաց սօլդատի բարեսրտութեան վրա, որովհետեւ իր վերջին կօպէկը, որ նա պահում էր մաշված կօշիկները նորոգելու համար, գցում էր նրանց մէջ: Պատահում է որ սօլդատը երեք չորս շաբաթ չոր հացը ուտելուց զրկվում է, նա գնում է հայոց գիւղը լաւալ գնելու համար որին ռուսները չուրեք են անուանում, թէ պէտք մի փոքր փափուկ է սուխարներից, կէս ֆունտ լաւալ համար 15—16 կօպէկ են առնում, զի ամենում ես վերցրու, կամենում ես մի վերցնի ջուրեղը իմն է, փողը քուռը պատասխանում է հայը կամ հայ տղան, եթէ սօլդատը խնդրում է որ աւելի էժան տան: Սօլդատին եթէ մի քանի կօպէկ է աւելանում, կանչում է իր ընկերոջը զօրան, գնանք խաղող գնենք: — Գնանք եղբայր: — Բայց գիտես ինչ է աւել լաւ է թուրքից գնել քան թէ հայից: Եւ ուղիղ է, թուրքը թէպէտ մեր հաւատարմ չունի բայց նրա սիրտը աւելի ուղիղ է: Ինչքան ժամանակ որ ֆայցի զօրքի մէջ ես համոզվեցայ որ ռուսները աւելի բարեկամեմում էին թուրքերի հետ, և հաւատ էին ընծայում նրանց, քան թէ հայերին: Ես

տեղ հայը մեծ դեր էր խաղում, թէ ուշադրութիւն դարձնել մարդկութեան ժամանակակից կեանքի վրա, որտեղ կայ հայի անունը....

Հին Բուլղարիայի կայսրներից ոմանք, ինչպէս յայտնի է, հայեր են եղել, բուլղարական կայսրների թիկնապահ զօրքը մեծ մասամբ հայերից էր բաղկանում, հին կարթագենացիները հայեր էին, այսինքն Հայաստանի մի գաղթականութիւն էին, ուրեմն Անիից հայ էր, Յիւդեոնի վարձպետը հայ էր, Մահմետի վարձպետը նոյնպէս հայ էր, Նապոլէօն Ի-ի ժամանակների ֆրանսիացի երեւելի զօրագետ պրինց Միւրատ հայ էր, Շամիլը հայ էր նոյնպէս և պատկված էր հայահու հետ, այժմեան թիւրքաց սուլթանի մայրը հայ է, Միդհատ-փաշայի մայրը հայ է, անգլիացի երեւելի գրողներ քաղաքատեսիս և փիլիսոփայ Զօն-Միլարտ-Միլլ և պատմաբան Մակկոլդ շնորհաստանի հայոց ընտանիքներից են ծագում: Անգլիայի թագուհի Վիկտորիա, ինչպէս քանի մի տարի առաջ Անգլիայում հրատարակված բրօշուրից է երևում, հայոց Արշակունեաց ցեղից է, ասում են որ աւստրիական առաջին մինիստր Ադոլֆ ռենգերացի հայ է, որ երեւելի լեհացի Լանգեմիլ լեհացի հայ է: — Վերջապէս այնքան շատ են սկսել երեւալ հայեր ու հայոց ծագումն անձինք այդ վերջին ժամանակները ամբողջ քաղաքա-

միշտ մեծ ուրախութեամբ արձանագրում էի մեր զինուորների դատողութիւնները հայոց ազգաբնակչութեան վերաբերութեամբ։ Այս դատողութիւնները առաւել ուղիղ են քան զինական ծանապարհորդների նկարագրութիւնները։ Ուստի զինուոր միշտ յաջողակ կարողանում է նկարագրել այն ազգերի արժանաւորութիւնները կամ պակասութիւնները որոնց հետ յարաբերութիւն ունի։

Պէտք է խոստովանել որ հարստահարութեան զգացմունքը աւելի զարգացած է մեր հայերի մէջ։ Ասում են որ այս բանը պատմական պատճառներից է առաջանում։ Կարելի է Բայց, բանը նրանում է որ փաստը կայ է ոչ որ ճշմարտութիւն սիրող մարդ չէ կարող հերքել։

Իմ նամակներից մէկի մէջ, որը տպւեցաւ «Ռուսներ» թերթի տեղեկագրերի համարի մէջ, ես ի միջի այլոց հարորդեցի որ Երևանեան նահանգի Սուրմալուի գաւառի բնակիչները յարձակւեցան իրանց ազգակից թուրք գաղթականների վրա, որոնք Տէր-Ղուկասովի զորքի հետ փախան Սուսամատան, կողմնակցին նրանց, խլելով նրանցից կենդանիներ, և այն անհայտ զոյքը որ նրանք կարողացան ազատել վայրերի քուրդերից և զարափափաններից։ Այս տեղեկութիւնները ես հաւաքեցի Սուրմալուի գաւառում ամենաճիշդ աղբիւրներից։ Սրանից յետոյ ճշմարտութիւնը յարգելով անկասկած էի հրատարակել թիֆլիսի հայերը, ինչպէս հարորդեց ինձ ձեր մշտական աշխատակիցը, այս բանը իմանալով կատաղեցան։ Ոչ պակաս ներշնչաւ և Սուրմալուի գաւառացիները։ Բէժմանքիով նրանք արդէն պատրաստուեցին գրաւոր կերպով հերքել իմ հայտարարած տեղեկութիւնները, բայց «Тифлисские Вѣсти» լրագրում տպւեցաւ մէկ պատմութիւն, քաղած տեղական լրագրից—գաղթական վարդապետի պատմութիւնը—որ համարեալ բան առ բան համաձայն էր իմ նամակի հետ։

Բոլորովին յարգելով հայերին մենք այնուամենայնիւ չը պէտք է ծածկենք ոչ միայն մեր բարեկամների թող իրողները, այլ և մերը։ Եթէ մենք մեր թշնամիների արժանաւորութիւնները և լաւ կողմերը զնահատում ենք, ուրեմն անկարելի է մեր պետութեան հովանաւորութեան տակ գանձած ժողովրդների պակասութիւնները և ցեղական թուլութիւնները լուրձեամբ անցնել։

Պատերազմի սկիզբներում, մենք շատ հաւատ էինք ընծայում հայերին, բայց պէտք է շուտով զղջայինք։ հայերը երևում էին հաւատարիմ լրտեսներ, որոնց ուղարկում էին թուրքերը և որոնք թշնամիներին հաղորդում էին մեր զորքերի տեղը, թիւը և ու-

րիշ սրա նման զաղանկէր։ Ի հարկէ մեր զօրապետները զենաւոր Լորիս-Մելիքով, Տէր-Ղուկասով և ուրիշներ վերջը սկսեցին աւելի խիստ վարկել նրանց հետ և մեծ զգուշութեամբ էին ընդունում նրանց ծառայութիւնները, անողորմ պատժելով յանցանքներին։

Փոքր-Ասիայի վայրերի բնակիչներից պաշտպանվելու համար, հայերին զէնք բաժանեցին և մինչև անգամ միլիցիա կազմակերպեցին։ Բայց այս բոլոր բանից ոչ մի բան չը դուրս եկաւ։ Պատահում էր որ 20 քուրդ կերեւային անապատում կամ լեռան վրա, հայերը անպաղպղ թողնում էին իրանց զինուորը, նստեցնում էին իրանց կանանց և երեխաներին սայլերի վրա և վախեցրած գնալով լուր գալիս էին մեր բանակը, թողնելով իրանց բնակարանները և տան կարասիքը։

Ես չեմ կարողանում հասկանալ թէ ինչպէս այս ժողովուրդը զարերի ընթացքում վայրերի ազգերի հարեան լինելով և մի և նոյն ժամանակ նրանցից թուրք գերազանցելով չը կարողացաւ այնքան զինուորականութիւն մշակել իր մէջ, որ պոտնական էր ընտանեքը և զօրքը թուրքերի և քուրդերի խմբերի աննշան յարձակմունքներից։ Վհատութիւնը հայերի մէջ հասնում է երկնասլաց, նրանք մինչև անգամ զէնք գործածել չը գիտեն։ Երբ որ օգոստոսի վերջին թւերում, քուրդերը թուրք 400—500 մարդ յարձակւեցան հայոց գիւղերի վրա, հայերից ոչ մէկը չը համարձակւեցաւ հրացան արձակել և ամբողջ հարկւրներով վախւում էին իգրի, մինչև որ օգնութիւն գնացին մեր կազակները, արտաքսեցին վայրենիներին և երկնաւոր գրիգորեաններին հաստատեցին իրանց առաջվայ բնակութեան տեղը։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մեծ ուրախութեամբ կարդացինք մշակիւ յՁ 92-ի մէջ, որ գործակատարների ընկերութեան կանոնադրութեան նախագիծը հաստատվել է և այդ ընկերութեան նպատակները աչքի առաջ առնելով, ես ընկալ հետեւեալ մտածմունքների մէջ։

Առհասարակ ամեն մի ընկերութիւն ունի ազդեցութիւն իր անդամների վրա և երբ մի մարդ ընկերութեան մէջ է լինում, նա միշտ զանազանվում է այնպիսիներից, որոնք չեն մտնում ոչ մի ընկերութիւն։ Առհասարակ առաջինը թէ բարոյական և թէ գործնական կեանքում միշտ բարձր է լինում երկրորդից։

Գործակատարները, կազմելով մի ընկերութիւն կը կազմեն մի առողջ մարմին և իրանց

շուրջը բոլոր իրանց ցրուած անդամներին կը հաւաքեն, կը միացնեն զրանց, կազդեն զրանց վրա բարոյապէս, և նրախան օգնութիւն կը հասցնեն իւրաքանչիւրին։ Մանաւանդ մեծ նշանակութիւն կունենայ այդ ազդեցութիւնը թիֆլիսի երիտասարդ գործակատարների համար, իսկ այսպիսիք շատ են։ Ինչպէս երեւում է կանոնադրութեան նախագիծից, ընկերութեան նպատակն է ոչ թէ միայն ուրախ և օգտակար կերպով անցկացնել տալ իր անդամներին ազատ ժամանակը, այլ և օգնել նրանց կեանքի ծանր րօպէներում։ Յայտնի բան է, որ եթէ մէկը ուզում է իրան ապահովացնել կամ օգնութեան ձեռք մեկնել իր ընկերոջը, նա երբէք այն չէ կարող անել ինչ կարող է անել մի ընկերութիւն։ Գործակատարների ընկերութեան համար շատ հեշտ կը լինի իր մի քանի տոմսեակ չբաւարարող և խեղճ անդամների գրութիւնը թեթեւայնել, պաշտօն չունեցողների համար պաշտօն գտնել, և այլն։

Յոյս ունենք, որ այս ընկերութիւնը շատ համակրողներ կունենայ ոչ թէ միայն գործակատարների, այլ և վաճառականների մէջ, որոնք այդ ընկերութեանց կողմնակի օգուտներ կը քաղեն։ Գործակատարը ապահոված իր ընկերութեանց, իր գործատեղ-վաճառականի միշտ հաւատարիմ և աշխատող պաշտօնեայ կը լինի։

Գործակատարը միշտ զգոյշ կը լինի մի անկարգութիւն կամ անհամատարմութիւն գործելուց, ի նկատի ունենալով այն նախատիւնը, որին կենթարկվել ընկերութեան մէջ։

Յոյս ունենք, որ վաճառականները այնչափ կը համակրեն և կօգնեն նոր ընկերութեանը, որ այդ ընկերութիւնը կը զարգանայ և հաստատ չիմք կը բռնէ։ Իսկ գործակատարներին շնորհաւորում ենք, որ այնքան եռանդով գործեցին և որ վերջապէս հիմնեցին իրանց ցանկացած ընկերութիւնը։ Փառք և պատիւ այդ ընկերութեան հիմնադիրներին։

Մենք գուշակում ենք, որ ժամանակով այդ ընկերութիւնը կը դառնայ գործակատարների համար մէկ ապաստարան, ուր կարելի կը լինի պաշտպանվել ամեն տեսակ թշնամիներից և թշուառութիւններից։

Վաճառական

ՆԱԽԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

20-ին դեկտեմբերի

Քանի որ ամեն քաղաքում անդադար աւազակութիւններ, զոգութիւններ և սպանութիւններ են լինում, Երևանը հանդիսաւ ու խաղաղ կեանք է վայելում, չը նայելով, որ իր բնակիչ-

աներկիւղ սկսել են հասարակական կարծիքին դիմել, ինչպէս մի հասարակական ձանաղված հիմնարկութեան ներկայացուցիչները կանէին։ Նորերումս ուսուց «Тифлисские Вѣсти» լրագրում երեւցաւ աւազակներից զբաժնաւոր, որ ուղարկված է խմբագրութեանը քաղաքային փոստով։ Ահա նամակը։ «Իշխան Բէրուժով պ. խումբագիր։ Մենք մի սխալ արեցինք, որ կրակ զցնցեցինք ինդը Բաղինով կնոջ տունը, Կուկիայում, Մենք կարծում էինք որ այդ տունը պատկանում է Բաղալ Ուլին, մեր ընկերոջ, որին մենք բերեցինք 15,000 րուբլուց աւելի, իսկ նա մեզ այժմ մի կօպէկ չէ կամենում տալ։ Մենք անպատճառ կամենում ենք սպանել նրան, եթէ նա մեզ չի տալ մեր փողերը։ Եթէ դուք այդ վերջացնենք, իսկ ձեզ ամօթ է, որ սուտ բան տպեցիք, իբր թէ մենք դիտաւորութիւն ունենինք սպանել պոլկովորդի պաշտօնեայ Նիկոլայ Բասիլովին, Մեր մտքումն էլ չէ անցկացել նրան կողոպտել կամ սպանել։ Տառա, Գիւրգի, Իվան, Մեր ազգանունները դիտէ Բաղալ Ուլին։

Ուրեմն աւազակները սկսել են այժմ դիմել հասարակական կարծիքին, սկսել են արդէն գրել նամակներ խմբագիրներին, նրանք լրագրիներին

ների, մահմետականների մի մասը հակումն ունի դէպի աւազակութիւն։ 1877 թ., այդ ծանր պատերազմական տարին անցնում է և ես չեմ յիշում ոչ մի դէպք զոգութեան կամ սպանութեան իրան Երևանի մէջ, աչքի առաջ չունենալով ի հարկէ այն ցաւալի անցքը, որ թուրքերը և հայերը սկսեցին միմեանց ջարդել, երբ անցնում էին Երևանից՝ դա ժողովրդական մէկ յուզմունք էր, այդպիսի դէպքերը չէ կարելի անցք անուանել, ինչպէս ասում են պօլիցիականները։ Միւս կողմից պէտք է ասել, որ էլ մարդ չը մնաց, ազգութիւն չը մնաց, որ այս առաւ իր ներկայացուցիչը չուղարկել Երևան։ Պատերազմի բեմի մօտիկութիւնը, վերջապէս Երևանի պատերազմական բեմի ձանապարհ լինելը այնպէս էր բերել, որ ամենքը, որոնք ցանկանում էին անցնել Տէր-Ղուկասովի զորաբաժինը, պէտք է Երևանից անցնէին։ Չենք կարող հաւատաւ որ այդքան մարդկերանց մէջ չը լինէին մի քանիսը, որոնք չուզեցան սրա կամ նրա ժամացոյցը ձեռք բերել, կամ լաւ չը պահած բարդ պահել, և այլն։

Այդքանը հէնց բաւական էր, որ Երևանում աւազակութիւններ լինէին, եթէ ընդունէինք որ բնիկ երևանցի զոգերը և աւազակները, որոնք մի ժամանակ օրը ցերեկով սպանում էին, որ այդ գողերը խելօքացել են և իրանց փեշակից ձեռք են քաշել։ Այն հանդիսաւ կեանքը, որ անցնում ենք երևանցիքս, այն ապահովութիւնը, որ գիշերվալ ամեն ժամանակ, ամեն տեսակ փողոցներում մենք ունենք,—այդ բոլորի համար մենք պարտական ենք պօլիցիական վարչութեանը։ Գոյցէ նա ունի իր շատ թերութիւններ, բայց այդ կողմից նա անմահելի է։ Պ. Կվարտանո, մեր պօլիցիայտերը, իր ձեռքին չունէ մի մեծ քանակութիւն ծառայողների, բայց իր ունեցածների շատ յարմար է ընտրել և կարգաւորել։ Բացի իրանից, նա ունի երկու հայ, մէկ տեղական թուրք և մէկ վրացի պօլիցիականներ, որոնք պրիստապետների օգնականներն են և ահա այս մարդիկ են, որոնք ապահով պահում են Երևանը և որոնցից զոգերը և աւազակները լրակատար իրաւունք ունեն գանգատաւոր լինելու։ Ես սովորութիւն ունեմ չըլել գիշերները և ամեն տեսակ տեղ մտնել, ամեն տեղ պատահել եմ մի պօլիցիականի։ Շատ անգամ ամենապետնական փողոցում, ուր ինձ այնպէս է թվացել, որ ոչ որ չը կայ, դիտմամբ բղաւել եմ և մի փողոցի մօտից, կամ մի քանդած տանից առաջս դիտաւորված պօլիցիական է բուսել։ Գիշերները պօլիցիայում մէկը միշտ մնում է, միւսները ցրվում են մի քանիսը չըլելու, իսկ միւսները սեկրետ, ինչպէս իրանք ասում են։ Շատ անգամ տեսել եմ պօլիցիայից զուրս գալիս արեխաներ ոտքին, արեխան և հասարակ թուրք չուրա հազած, փափախը գլխին, մէջքին խանջալը կապած և ետինից զգած մարդ, որ միշտ մի լաւ աւազակի, կամ բաշխուղուկի նմանութիւն ունեցել, իսկ այդ մարդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ պօլիցիականը չորերը փոխած։ Այդպէս հագնված մի քանի մարդով, զբաղւ գնում են և ծածկվում այն տեղերը, որ վտանգաւոր են համարում։ Պ. Կվարտանո իր ծառայողներին ընտրել է տեղական մարդկերանից, այնպիսի անձներ է ընտրել նա, որ դիտեն Երևանի ամեն մի ծակ ու ծով, որ ձանաղում են ամեն մի կատակածա-

աշխատակիցներ են դառնում. գուցէ շուտով իրանք կը սկսեն հրատարակել մի լրագիր, որպէս զի ունենան իրանց օրդան և պաշտպանեն իրանց շահերը...

Գիտէք, ընթերցող, ես ինչ կանէի, եթէ պօլիցիայտեղ լինէի, որ վերջ գնում մեր քաղաքում անդադար կըլիմոյ աւազակութիւններին, Ես կը հրաւրէի մեր երեւելի աւազակ Տատո Յուլուկիճէին, կը տայի նրան լաւ առձեռն, նրան կը նշանակէի պօլիցիական։ Հաւատացե՛ք իսկոյն ամբողջ թիֆլիսում կը դադարէին աւազակութիւնները և ամեն բան կրկին կարգի կընկնէր... Դա միակ հնար է տեղական տարրից կաղծակեղված, գործնական հիմք ունեցող պօլիցիա ունենալ։

Այս տարի այս ֆեբրուարի կը լինի երկի իմ վերջին ֆեբրուարի։ Ուրեմն հրատարական եմ առնում ընթերցողից մինչև եկող տարին, ցանկանալով նրան բաղդ, նոյնպէս բաղդ ամբողջ հայոց ազգին, իսկ «Մշակին» աղբորութիւն։

Ասիացի

կրթված աշխարհում, որ ամենքին յիշել և մի առ մի այստեղ թվել ինձ անհնարին կը լինէր։

Այո, մինչև որ հայերի և հայոց ազգութեան վրա ամեն տեղ խօսում են, մենք ինքներս ինչ ենք անում,—ոչինչ...

Չէ, ներքեցեք, մենք էլ աշխատում ենք, առաջ ենք գնում, հիմնում ենք զանազան նոր ուսումնարաններ, թէ և հիմներ շատ վատ ենք կառավարում, հաստատում ենք զանազան կոմիտէաներ, թէ և այդ կոմիտէաները մեծ գործ չեն կատարում, ձեռք ենք տալիս նոր լրագրիների հրատարակութեանը, թէ և հիմներ չենք աշխատում պահպանել...

Ինչ էք ուզում աւելի «Մշակը» նոր տալուց ամեն օր կը հրատարակվի, ունենք «Մեղրու», «Փորձ», «Հայկական Աշխարհ» և «Արաբա»։ Բացի սորանից ասում են որ շուտով կը սկսեն հրատարակվել «Պսակ» և նոյնպէս մի նոր մանկավարժական (?) ամսագիր...

Այսպէս է վերջանում ուրեմն 1877 թիւը։ Այո, ներկայ տարին մի կողմից հայոց ազգին մեծ անուն հանել տուեց, թէ և միւս կողմից անսկաբարգրելի թշուառութիւնների և տանջանքների

ւոր մարդու, Համարձակ կարելի է ասել վառք և պատիւ թէ՛ պ. Կվարտանտին և թէ՛ իր պաշտօնակատարներին: Բացի այդ փոքր չէ պահպանում Երևանը և հասանքերի ընկերությունը, որոնց գոռալը և դեռ հեռուից կանչելը՝ քիմ սան էլ, շատ նորեկի է վարեցրել: Հասանքերի ընկերությունը մի կազմակերպված վարչություն է: որ ունի իր հայ և թուրք հաստատություններ: Հասանքերը խառնութեան բերից են վարձատրվում և ամբողջ գիշեր գինւորված կանգնած են լինում այս կամ այն խառնութի մոտ և որոշ ժամանակամիջոցներում բղավում են, որ յայտնին իրանց ընկերներին թէ իրանց մասը ապահով է: Մի քանի անգամ գիշերուայ ընթացքում հաստատություն գնում է և ամեն բան ստուգում է, շատ անգամ հասանքերի տեղերը փոխում է, խառնութիւններն նայում է, և այլն: Գողը շատ ճարպիկ, շատ իր արհեստի մէջ վարժ պէտք է լինի, որ հասանքերին յանձնած խառնութից մի բան գողանայ, բացի այդ հասանքերը մեծ օգնություն են հասցնում, երբ մի խառնութի հրդեհ է ընկնում:—Չեղ յայտնի է, որ յուստով մեր քաղաքն էլ մտցնվելու է քաղաքային ինքնավարությունը: Հատերը ցոյց են տալիս Յ. Զ. Ղորղանեանի վրա, իբրև ապագայ քաղաքագետ: Պ. Ղորղանեանը յայտնի է իբրև աշխատող, ամենաբարեկից ուսուցիչ տեղական պրոգրեսիվային շատ ցանկալի և օգտակար կը լինէր մեր քաղաքի համար, եթէ ընտրվէր պ. Յ. Ղորղանեանը և կարողանար ընդունել այդ պաշտօնը: Անկասկած նա նոյնքան եռանդով կաշխատէր իր նոր պաշտօնի մէջ, ինչքան աշխատում էր լուսաւորել մեր երեխաների մտքերը: Տարաբաղդաբար ասում են, որ պրոգրեսիվային վարչությունը պարտնէ չէ թոյլ տալի թողնել իր պաշտօնը ուսուցչական տարվայ վերջնալուծ առաջ:

ՆԱՍՏԱԿ ԽԱՐԿՈՎԻՅ

Դեկտեմբերի 4-ին

Բարձրագոյն կայսերական հրովարտակով յուստի 5171 անցեալ 1876 թիւ ճանապարհների յարակցութեան Նախարարին հրաման տրվեցաւ խարիզ-Նիկոլայեւեան երկաթուղու ընկերութեան սկսել շինութիւնն ճանապարհի Ազովեան երկաթուղու Մերեֆա (Мерефа) անուանված կայարանից, Սումա քաղաքի վրա (խարիզ-Նիկոլայեւեան երկաթուղիի Լաբովին կայարանն անցնելով) մինչև Վորոժնա (Ворожнѣ) անուանեալ կայարանն կուրսի-կիէվեան երկաթուղու: Ընկերութիւնն շուտով շտապեց օգուտ քաղել այսպիսի հրամանատարութենից և սկսեց ճանապարհի շինութիւնն մի և նոյն ժամանակ զանազան մասներում: Ինչպէս ճանապարհի մակերևութի շինութիւնն նմանապէս և կայարանների շինութիւնը գնում էր յաջողութեամբ և արագութեամբ:

Սումսկայա (Сумская) անուանեալ երկաթուղին որ մասն է խարիզ-Նիկոլայեւեան երկաթուղիի՝ ընդ ամենն 225%, վերստ է երկայնութեամբ: Բոլոր ճանապարհի տարածութեան վրա նշանակած է 14 կայարան և 2 կիսակայարան: Կայարանների շինութիւնները են փայտաշէն միայն քարաշէն հիմքի վրա, իսկ մնացեալ շինութիւնները ինչպէս արվեստագործաց, չոգեկառքերի և ջրամբարների համար նշանակած է 35 լոկոմոտիվ, համեմատ թվով վազօններ ճանապարհորդների և ապրանքային հողաբուր տափարակներ (платформа):

Այժմ բոլոր այս շինութիւններն վերջացած են և ճանապարհի ամեն հարկաւոր իրեղէններն պատրաստ: Երկաթուղիի շինութեան ժամանակ միշտ բանում էին մինչև 6000 հոգի, որք ժողոված էին թէ հիւսիսային և թէ հարաւային ճանապարհին կից գաւառներէն: Այս ճանապարհը ընդունելու համար նշանակած էր տէրութեան կողմից առանձին ժողով (комисія) որ և սկսեց իր աշխատութիւններն վերադնութեան նոյնութիւն: 20-ն, Վորոժնա անուանեալ կայարանից և վերջացրեց նոյն ամսի 23-ին հասնելով Մերեֆայի կայարանը: Ժողովը գտաւ երկաթուղիի ճանապարհը բոլորովին պատրաստ բացման համար: Ինչպէս հաղորդում են՝ ճանապարհը կը բացուի հասարակութեան համար դեկտեմբերի 10: Այս նոր ճանապարհի կայարաններից ամենապիտանի և ամենաշքեղն է Սումա քաղաքի կայարանը: շինութիւնն՝ որ շինված է թէ արաբերէն և ներքին տեղով՝ ուստաց ճաշակով:

Ա. Մեղրումանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւագակութիւնները շարունակվում են թիֆ-Լիսոն: Դեկտեմբերի 20-ին երեկոյեան ժամը 6-ին Սոբօլակ անուանված թաղում Կորգանովի տան հանդէպ երկու մարդ յարձակվեցան անցնող ոսկերիչի վրա, և վիրաւորեցին նրան ատրճանակից: Գնտակը անցաւ ոտքի միջով: Այդ ժամանակ վրա հասաւ մի պօլիցիական, բայց աւագակները նրա վրա էլ ատրճանակ արձակեցին:

ԱՍԱԼ-ԲԱԼԱԲԻՅ մեզ գրում են: «Մեր Ախալ-քաղաքներից շատերը գտնվելով գործող բանակում և հանցնելով սուղատներին հարկաւոր միջերը, նիւթապէս լաւ վարձատրվում էին: Մեր այդ հայերից ոմանք չըբերով գործող բանակի հետ, բերեցին իրանց հետ զանազան հետաքրքիր տեղեկութիւններ: Այդ անձներից մինը պ. Ներսէս Մաղաքեանցն է, որ պատերազմի սկզբից մինչև այսօր բանակի մէջն էր: Նա պատմում է որ մօտ 50,000 հայեր՝ վանդաներ, մեկնեցին, բայց զգցիներ, էրզրումցիներ զոհ են եղած քրդերի և բաշկուղուկների սրերին: Բայց չը կայ մէկը, աւելացնում է պ. Մաղաքեանց, որ ման գալով Հայաստանի այլ և այլ տեղեր, մի առ մի նկարագրել մեր եղբայրակիցներից կրած տանջանքները և ներկայացնել նրանց դրութիւնը Եւրոպայի առջև: Իրաւ է, վերջացնում է պարոնը, կան թիւրքաց բանակում անցնական մեծահաճախ լրագրիւնների թղթակիցներ, բայց նոքա չեն կամենում արատաւել իրանց գրիչները հայերից կրած տանջանքների նկարագրութեամբ, որ չը նեղացնեն Բարձր Դարան:»

Մեզ գրում են ԱՍԱԼ-ԲԱԼԱԲԻՅ և հետեւեալը: «Մեր գաւառի մի քանի գիւղերում, ինչպէս լսում ենք, հաւաքում են յօգուտ թիւրքիայից եկած հայ գաղթականների՝ փողեր, ցորեն, գարի և այլն:

«Тифл. Вѣстн.» լրագիրը լսել է որ ամբողջ կովկասում վերջին ժամանակները տարածված սուտ թղթագրութիւններ իրանց վրա կառավարութեան ուղարկութեան դարձնելով, այժմ գտնվեցան այդ գործի մասնակցողները: Լրագիրը ասում է որ սուտ թղթագրումը տարածված էր զխաւորապէս Երևանեան և թիֆլիսեան նահանգներում և մինչև անգամ գործող բանակի մէջ:

Նոյն լրագիրը լսել է որ նոր տարուց կը բացվի թիֆլիսոնի մի նոր ընթերցարան:

Դեկտեմբերի 21-ին յանկարծակի վախճանվեցաւ թիֆլիսոնի թիֆլիսեան նահանգի ազնուականների առաջնորդ, գեներալ-ադյուտանտ Իլյան Իւվազ Անդրօնիկով: Նա յայտնի էր որպէս ազնիւ, բարի մարդ, և շատ յարգված էր ոչ թէ միայն ազնուականների շրջանից, բայց և իր բոլոր ծանօթներից:

«Тифл. Вѣстн.» լրագիրը լսել է որ դիտաւորութիւն կայ շինել ՄՅԻԷԹԻՍԻ մի գիտութեամբ հիւանդանոց, կուր գետի ափում: Այդ տեսակի դիտաւորութեան վրա անհրաժեշտ ենք համարում կառավարութեան ուղարկութիւն գործնել, որովհետեւ Մցխէթի հիւանդանոցը կուր գետի հոսանքով կարող է թիֆլիսի բնակիչներին զանազան դիպուկական հիւանդութիւններով վարակել:

ԱՍԱԼՅԻՍԻՅ մեզ գրում են: «Այս տարի Ախալցխայի բնակիչները, որոնք մեր հայ-հոգեւորականաց ընթերցարանի անդամներ են, վճռեցին Նոր տարվայ և Կրօնական տոները ազգականներին և բարեկամներին շնորհաւորել գնալու փոխանակ, փող նուիրել յօգուտ ընթերցարանի: Այդպիսով հաւաքվեցաւ յօգուտ ընթերցարանի 25 ռուբլ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Անգլիական միսիոնարութիւնը հրաւիրեց պարլամենտը ժողովել երեք շաբաթ առաջ որոշած ժամանակից: Միսիոնարութեան այսպիսի կարգադրութիւնը լրագրիւնները զննազան տեսակ են մեկնում և գուշակութիւններ անում: «Standard» լրագիրը, որ յայտնի է

իրբև թիւրքաւոր լրագիր ասում է, որ պարլամենտը հրաւիրվում է ոչ թէ Պէթլայի առաջին առիթով, այլ այն պատճառով, որ երբեք փասնդի է ենթարկվում Գերմանիայի և Աստրո-Ունգարիայի կողմից Ռուսաստանին տուած իրաւունքից՝ օգուտ քաղել իր յաղթութիւններից այնպէս, ինչպէս ինքը Ռուսաստանը կը բարհաճէ: Երևանի հարցին վերջնական վճիռ տալու ժամանակ, Անգլիան պէտք է նոյնպէս իր ձայնը ունենայ, ուրեմն պարլամենտը պէտք է իրաւունք տայ կառավարութեանը պահանջել, որ ինքն էլ ձայն ունենայ: Կառավարութիւնը վճռել է կրեդիտ պահանջել գործերը շատացնելու համար: Գաւառական լրագիրները վկայում են, որ ոչ մի տարի մինչև անգամ Գրիմի պատերազմի ժամանակ գործերը համար այդքան կոշկիներ չեն պատրաստված, ինչքան այժմ գործարանները պատրաստում են: «Times» լրագիրը բողոքում է միսիոնարների կարգադրութեան դէմ: Պարլամենտի անդամների անժամանակ ժողովելու համար: Լրագիրը երկրի համար վնասակար է համարում ամեն տեսակ փոփոխութիւն Անգլիայի քաղաքականութեան մէջ: Յ. յղ. լրագրի կարծիքով չէզոքութեան խախտել խռովութիւնների պատճառ կը լինէր Անգլիայում: Բացի այդ, այդպիսի քայլը կորստաբեր կը լինէր թիւրքիայի համար, որովհետեւ նրան կը յուսադրէր և կը ստիպէր շարունակել պատերազմը Ռուսաստանի հետ: Ներկայ միսիոնարութիւնը «Times» անուանում է չը հասկացված միսիոնարութիւն, որովհետեւ զրա կարգադրութիւնները շատ անգամ չեն հասկացվել: Նաու կարել է, որ պարլամենտի հրաւիրելու նպատակը բողոքովն այլ է, քան թէ ինչպէս մեկնում են, շատ կարել է պարլամենտը հրաւիրվում է, որ նրանից կրեդիտ պահանջեն Անգլիայի շահերից մէկը փողով պաշտպանելու համար: Այս ամենը կարող է պատահել բողոքովն չը կաշկով Ռուսաստանի և թիւրքիայի պատերազմական գործերին, այնու ամենայնիւ չէ կարել ենթադրել, որ պարլամենտը հաւաքվում է կառավարութեան վճիռը հաստատելու, այլ որ նախագիծ տայ ապագայ քաղաքականութեան համար: Սրանով լրագիրը կամենում է ցոյց տալ, որ միսիոնարները դեռ ևս ոչ մի վճիռ չեն ընդունել: Այնու ամենայնիւ ցաւալ է, որ թագուհու կառավարութիւնը իր նպատակները պարլամենտի անժամանակ հրաւիրելու առիթով գաղտնի է պահում: Միսիոնարների գաղտնապահութեանից անբաւական են թէ Ռուսաստանի ամենաոխրելիմ թշնամիքը, թէ նրանք, որոնք ուրախ են, որ թիւրքերը տրտաքվին Ներսէսից, միայն նախանշում են, որ Ռուսաստանը պէտք է կատարէ այդ պատմական գործը: Հարկաւոր էր Անգլիայի Կ. Պօլսի գեսպան Լայարդին հրամայել, որ նա հասկացնէր թիւրքաց կառավարութեան, որ ոչ մի տեղից նա օգնութիւն չը պէտք է սպասէ, որ նա հասկանայ վերջապէս, թէ ինքը յաղթված է և պէտք է որքան կարել է շուտով խաղաղութիւն խնդրէ Ռուսաստանից, որովհետեւ ոչ ռիցի այլ ևս չէ կարող օգնութիւն սպասել: Առանց այսպիսի կարգադրութեան պարլամենտի անժամանակ հրաւիրելը թիւրքերը կարող են յօգուտ իրանց մեկնել և երբ նրանք կը տեսնեն, որ խաբված են, աւելի կը թշնամանան Անգլիայի հետ: Ի նկատի ունենով այս ամենը, լաւ կը լինէր, որ թէ անգլիական ժողովուրդը և թէ Ներսէս իմաստը միսիոնարների շտապելու նպատակը: Իսկ ինչ որ վերաբերում է մեզ, մենք առանձին ցանկութիւն չունենք իմանալ այդ նպատակը, մենք գիտենք, որ միսիոնարները վճռել են, որքան կարել է շատ սպասել հանգամանքներին, այժմ զգում են, որ մի որ և է վճիռ պէտք է ընդունել: Անկասկած այսպիսի կրիտիկական քաղաքական կառավարութիւնը իրաւացի կամենում է, որ պարլամենտը ժողովված լինի, որպէս զի ամեն

քաղաքական նրա կամքը հարցնել: Պարլամենտի վերջին նիստերը հաստատեցին, որ նա վճռել է երկրը չէզոք պահել արեւելեան հարցի վճռելու ժամանակ և ինչպէս որ Գրաւատունի ճարտարութիւնը անկարող եղաւ ստիպել մեզ դէնք առնելու օտաւանների դէմ, նոյնպէս էլ թիւրքաւորները անկարող են պաշտպանել թիւրքաց խախտված տէրութիւնը: Մենք առիթ չունենք փոխել մեր քաղաքականութիւնը, որովհետեւ լորդ Դերբիի վերջին խոհեմ շքաբերականից յետոյ, ոչինչ չէ պատահել, որ բրիտանական շահերի դէմ լինէր: Ի հարկէ կառավարութիւնը կաշխատէ հաստատել, որ այդ շահերին վտանգ է սպառնում, բայց յուսով ենք, որ Անգլիան իրան փասնդի մէջ կը համարէ, թէպէտ նա վերջում է Սերբիայի դէմ և շփոթված Ռուսաց վերջին յաղթութիւններից:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական կրեւականները ինչպէս երբեւում է չեն կամենում ընկձվել Մարշալ Մակ-Մաճօնի քաղաքականութիւնը փոխվելուց յետոյ: «National Zeitung» լրագրում գրում են, որ միապետական ձգուամերի անյաջողութիւնը այնքան չէ վշտացնում կրեւականներին, որքան բողոքական տարրի գերազանցութիւնը Դիւֆօրի կարիստում: Կրեւականները մասնակի են անում այն բանի վրա, որ Վալդիգուտտ, Լէօն Սէ, Ֆրէյսինէ, Պօտիւս, և Բօրել միսիոնարները բողոքականներ են և սրա վրա «Gazette de France» լրագիրը աւելացնում է, որ սրանց միսիոնարութիւնը յանձնվեցաւ ոչ թէ այն պատճառով որ մէկ առանձին ընդունակութիւն ունէին այս գործի մէջ, այլ որովհետեւ բողոքական համոզմունքներ ունէին: Կրեւականները ամենից շատ ատում են Վալդիգուտտին: Նրանք շատ յաջողակ կերպիւ հաւատացնում են, որ նոր միսիոնարի անունը բողոքովն հանգստացրեց Բիւմարկին ար մեծ անհանգստութեան մէջն էր: Կարելի է երեւակայել թէ այս ապացոյցները ինչպէս կարող են վնասել Վալդիգուտտին: Ֆրանսիացիների աչքում, որոնք ոչ մի բանից այնքան չէին վախենում, որքան Բօրել—Ֆուրտուի չափից գուրս ազգասիրական ձգուամերից: Բայց ինչպէս միապետականներին նոյնպէս և կրեւականներին կը ֆայ միայն նախարկել հանգամանքի բերմունքին: Նրանք այլ ևս չեն կարող յոյս ունենալ սահմանադրականների խմբի վրա սենատում, որը յայտնեց որ նա բողոքովն դիտաւորութիւն չունի կրեւականների կանդիդատ Ֆալլուին ձայն տալ առաջնիկայ ընտրութիւններին, նրան միջև մահ սենատոր ընտրելու համար: Նշանակում է հանրապետական կարիստի դրութիւնը բաւական հաստատ է: Թիւ Ֆալլու գաւտելով «National» լրագրում այն բանի վրա թէ ներքին խաղաղութեան վերականգնումն Ֆրանսիայում ինչ ազդեցութիւն կուտենայ նրա արտաքին քաղաքականութեան վրա, ի միջի այլոց ասում է Մէկ ժողովուրդ որ տարել է այդքան տանջանքներ, ժողովուրդ որ չը նայելով իր ներքին երկպառակութիւններին նորից վերականգնում է հաստատ հիւսքերի վրա և հինգ միլիարդ փող ունէ, այդպիսի ժողովուրդը կատարեալ ապացուցեց իր ինքնաճանաչութեան և ինքնակառավարութեան ընդունակութիւնը: Ֆրանսիան արդէն երկու անգամ, առաջին 1876 թիւ փետրվարին և յետոյ 1877 թիւ հոկտեմբերին, հաստատ առաջ տարաւ իր կամքը և միայն մօքի հիղնականութեամբ և հաստատ վճռողականութեամբ ստիպեց բողոքովն որ իրան հնազանդվին: Այդպիսի ազդը իրաւունք ունի Ներսէսի խորհրդում տեղ ունենալու և նա չէ կարող անտարբեր մնալ դէպի երկու հերոս ազգերի կռիւ, երբ այս կռիւ նպատակները մօտիկ վերաբերում են նրա ամենաթանկագին շահերին: Մեր արտաքին գործերի նոր

մինչև որ կը հասանայ այս բոլորը Ազատ
ամեն կայսրները, նրան կառավարող էր
հեռախոսութիւնը և իր հաստատութիւնը,
հեռու բոլոր երկաթուղիները նա կը
գործէ սիրելով ազատութիւնը և հայրենիքը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բուխարէստից հեռագրում են «Presse» լը-
րագրին, որ ըստմանական երկաթուղիների կառա-
վարութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ 24,000
մարդ ձիաներով և թնդանով կանցնեն
Գոմիսիայի միջով Բուխարիստ: Սիստովից ստա-
ցած հեռագրի մէջ կարդում ենք, որ Գոմիսիայի
վրա երկու նոր կամուրջ են շինում Սաղուրովի
և Վարդիկի կղզու մօտ: Սուլէյման-փաշայի գը-
լապար ուղիքը յետ քաշվեցան Բուխարից:

— Կ. Պոլսից հեռագրում են զեկտեմբերի
20-ին. Բ. Գուլը մինչև այժմ մեծ պետութիւն-
ներից պատահան չէ ստացել միջամտութեան
վերաբերութեամբ ուղարկված շրջաբերականի
մասին: Սաղիկ փաշան պատգամաւորների պա-
լատի նախագահի պաշտօնից հրաժարվեցաւ:

— «Correspondance Général» լրագրին հեռա-
գրում են զեկտեմբերի 20-ին, որ թիւրքաց Ան-
տիարի բերդապահը պատրաստ է այս ամիսը
Աւստրո-Ունգարիային տալ, անօգուտ է նրա աշ-
խատանքը, որովհետև նրա առաջարկութիւնը
չի ընդունվի:

— Վիեննայից հեռագրում են զեկտեմբերի
19-ին, որ երկուսն աւստրիական պատգա-
մաւորների մասնաժողովում կոմս Անդրային
յայտնեց, որ նա չէ կարող իր քաղաքականու-
թիւնը ոչ մի պայմանով փոխել:

— Լոնդոնից գրում են «Կէօնի» լրագրին, որ
մինչև արդեւոր կարելի եղած նիստում համաձայն-
վեցան միմեանց հետ և այն լուրը որ իր թէ
դրանցից մի քանիսը հրաժարական են տուել
առաւ է. Բիթօնֆիլդ լորդը պնդում էր, որ Կ.
Պոլսի կոնֆէրենցիայի պրօգրամը ընդունեն
իբրև ապագայ խաղաղութեան պայմանների
հիմք: Իսկ եթէ Ռուսաստանը կը մերժէ այս
առաջարկութիւնները այն ժամանակ լորդ Բի-
թօնֆիլդը դիտարկութիւն ունէ զինել նրան
պահանջներով Անգլիայի շահերը պաշտպանելու
մարդով:

— Մարդկույթ լինելու են մեծ տօնախմբու-
թիւններ թագաւորի պատկերով պատճառով,
պատկեր օրը յունվարի 22-ին է նշանակված:

— Բէրլինից հաղորդում են «С. Петерб. Вѣд.»
լրագրին. Կ. Պոլսից ինչը տեղեկութիւններ են
ստացված որոնցից իմանում ենք որ Սուլթանը
երկու կրակի մէջ է գտնվում: Լայաբը համո-
զում է նրան պատերազմը շարունակել մինչև
վերջին ծայրը: Բէյս և ուրիշ զեկապանները խոր-
հուրդ են տալի նրան խաղաղութիւն կապել:
Գերմանական զեկապանը, որին Սուլթանը շատ է

հաւատում, խորհուրդ է տալի անմիջապէս Ռու-
սաստանին դիմել խնդրելով, խաղաղութեան
պայմանների վրա խորհրդակցելու համար:

— Կ. Պոլսից հեռագրում են զեկտեմբերի
10-ին (22-ին), որ յունաց պատրիարքի կոնգրակը
զինուորական ծառայութեան վերաբերութեամբ
վարդ յունաց կեղեցիներում կը կարգադրվի:
Այստեղ եկան Հնդկաստանից ուղարկված պատ-
գամաւորները, բերելով իրանց հետ բաւական
փող: Հեռագիրը լրացումից հաղորդում է որ
ուսուները պատրաստվում են լրացումը պաշա-
րել:

— Էրզրումից գրում են «Times» լրագրին, որ
նոյեմբերի կէսին մոտ քաղաք 63 սայլ 600
թիւրք վերաբերվածներով մէկ օֆիցէրի առաջ-
նորդութեամբ, որը բերաւ Մուխթար-փաշային
մի նամակ Գէյման գետերակից: Այս նամակին մէջ
կարճ յիշում է զէներալը ուսուների կողմից կա-
տարած հոգացողութիւնները զէպի թշնամի վի-
րաւորվածները և սպասում է, որ օսմանեան զի-
նուորները իմանալով այս ամենս իրանց ազգա-
կիցներից, այլ ևս վայրենութիւններ չեն գործի
ուսու վերաբերվածների դէմ և չեն անպատմի
բարձր Գրան անունը: Գէյման Գէյմանը խն-
դում է, որ սպիւրը անկողինների հետ ուղար-
կվեն, որովհետև դրանք շատ հարկաւոր են իր
զինուորներին: Եւ իստիկ եմ, ասում է անգլիացի
նամակագիրը, բերված թուրք վերաբերվածների
չափերի հետ և ամենը չնորհակալութեամբ յի-
շում են թշնամու խրամները իրանց հետ: Նրանք
զարմացած էին կերակուրի քանակութեան և
որպիսութեան վրա, որը ստանում էին լաղա-
րէթումը: Ամեն օր մէկ օֆիցէրը այցելում էր
զրանք և հարցնում էր՝ չունեն դրանք մի որ և
իցէ բանի վրա գտնուածներու վերջապէս դրանց
համապարհ դեղու ժամանակը տուել են տաք
շորեր և ամեն մէկին հարկը պիտաւոր: Այս ամեն
ասանքները շատ սրբաւային Մուխթար-փաշային,
որովհետև զա ինքը շատ մարդասէր և քնքայ
մարդ է: Եւ իստիկ ասում զօրքին ամենախնայ
հրաման: Եւ յայտնում էր զօրանում, որ ամեն
մէկ զինուոր, թէ սպանէ կամ բռնաբարէ թըշ-
նամի վերաբերվածին, և ամեն մէկ օֆիցէրը եթէ
այս չարագործութեան ներկայ լինի և արգելք
չը դնէ, անպաղաղ կը սպանվեն: Եւ իստիկ 9-ին
կատարված պատերազմումը, Զօրա Աղիդի մօտ
պ. Զօրաբը, Անգլիայի ներկայացուցիչը Էրզրու-
մում, քիչ էր մնացել, որ սպանուի, երբ զա քա-
ղաքները ընկել էր թիւրքերի մէջ, որ արգելէ
զրանց ուսու վերաբերվածների կոտորելու: Բազ-
դաւորապէս այդ նրան բոլորովին յաջողեցաւ,
և այդ լուրը հասնելով գլխաւոր հրամանատար
Մուխթար-փաշային աւելի ամրացրեց այն բա-
րեկամութեան կապը, որը արդէն գոյութիւն ու-
նէր այդ երկու ազնիւ անձնանքների մէջ:

— Անգլիայի ներկայացուցիչը Էրզրումում, պ.
Զօրաբը հայ է ազգով և յայտնի է իր խելօք և
ազնիւ գործունէութեամբ:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պետերբուրգի իրաւարանական ընկերու-
թեան քրէական բաժնի նիստում, քննվում էր
Ն. Դեկլիւզովի զեկուցումը պատկի դէմ յան-
ցանքների վերաբերութեամբ: Կեկտեմբերի 10-ին
նորից շարունակվում էին այս զեկուցման վրա
վիճարանութիւնները, նախագահը բոլոր ամիս-
փեց 5 հարցի մէջ, կարելի է արգելք մեր օրէ-
նագրութեան մէջ զեկուցել բոլոր պետութեան
համար քաղաքական պատկի պայմանները, քա-
ղաքական պատկի պահպանելը հերձաւորների
համար, մի և նոյն տեսակ պատկի թողալութիւնը
հրէաների, մահմադարների և բոլոր ոչ քրիս-
տոնեայ դատաւորութիւնների համար Ռուսաստա-
նում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

СКЛАДЪ РАЗНЫХЪ СОРТОВЪ
БУМАГИ
понижается на углу Вельяминовской улицы,
рядомъ съ конторою газеты «Кавказъ» въ домѣ
Хосроева.
ՀԱՆՈՋԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐԻ
ՊԱԶԵՍ
գտնվում է Վէլամովնովսկայ փողոցի անկի-
նում, «Кавказъ» լրագրի խմբագրատան մօտ,
Խոսրովի տանը: 3-3 (1)

Ստացված են ԵՈՒԿԱՆԵՐԻ համար այրվող
թիւեր, բէնգալեան կրակներ, զուխներ
(հոտաւոր ջրեր) օդոյից կշռով վ.
ԳՐԻՎՆԱԿԻ մազաղնիում:
Получено для ЕЛОКЪ зажигатель-
ныхъ нитки, бенгальскіе огни, дукхи,
одеколонъ на вѣсѣ въ магазинѣ В.
ГРИВНАКА. 4-4

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ Հայոց կենդանի լի-
զուի ԳԱՍԵՐ և ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ:
Հարցնել «ՄՇԱԿ» լրագրի խմբագրա-
տանը: 10-10

Հոտով ըստ կը տեսնի ՕԳՏԱԿԱՐ ՇՈՒՊ-
ՊԻՍԵՐ «Два дня въ улу нумешесторе Пе-
тра въ Ясони» գրքիցի հայերէն թարգ-
մանութիւնը: ԱՍՍ ԳՐԻՎ ԳՐԻՎՆԱԿ
ՅՈՒԹ ՏԱԶՆԱՍԱՆԻՑ ԱՆԻԿՈՎԿԱՍ ԳԱՐՔԱՐ
ՀԱՅ ԳԱՐՔԱԿԱՆՆԵՐԻՆ: 2-3

նոյն վիճարանութիւններից յետոյ երեկոյս որ-
անդամներից մեծ մասն կարծիքը հետեւեալն է.
մեզ մօտ անհրաժեշտ է քաղաքական պատկը
և քաղաքական պայմանները վերջացնելուց յե-
տոյ, պատկիցներին իրաւունք է տրվում կէ-
ղեցական կարգով սրբագործելու իրանց պատկը
Հրէաների, հերձաւորների, մահմադարների
և ուրիշների քաղաքական պատկի թողալութեան
հարցը վճարելու: Բազմութեամբ ձայներով Աղ-
դէսով օրէնագէտ իրաւարանների ժողովը վճարե-
քաղաքական պատկի թողալութիւնը Ռուսաստա-
նում:

Լուսմ ենք որ ամենքին յայտնի վ. Բօգաչեկ
թողնում է մանկավարժական պաշտօնը և հրա-
մարական է տալիս պետական ծառայութիւնից:

На 1878 годѣ
ПОДПИСКА
На всѣ газеты и журналы (рускія и ино-
странныя) принимаетъ
Контора объявленій
Н. ВАСМУТЪ И К-о
МОСКВА Мясницкая д. Пагариной
ԽՍՍԱԿՍ Միանիցկայա փողոց, տուն
Գագարինի
1878 թիւ համար
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՍՏՈՐԱ-
ԳՐՈՒԹԻՒՆ
բոլոր թէ առաջ, թէ արտասահմանի լրա-
գիրները և ամադիրների վրա
Ն. ՎԱՍՄՈՒՏ ԵՆ ԸՆԿ.
Կայտարարութիւնների կանտորայում:
5-5

ԱՆՈՒՇԱԿՑՈՒՄ ՍԱԳՈՒՆԵՐԻ ԵՒ ԿՍՄԵՏԻԿԱ-
ԿԱՆ ԱՊՐԱՆԵՐԵՐԻ ՖԱԲՐԻԿԱ
ԽՍՍԱԿԱՑՈՒՄ
ԲԻՐՈՒՄ ԵՒ ԸՆԿ.
կարելի է ստանալ սեփական խանութներում
Ն. ԿՈՒՍԿԱՍ փողոց, տուն Բաստանցի փողոց
Իլինկա փողոց, տուն Троицкаго подворья.
Նոյնպէս ՌՈՒՍԱՍԱՆԻ ԲՈՂՈՐ ԲԱՐԱՐՆԵՆ
ԲՈՒՄ գլխաւոր ժամանակների մօտ:
Պրէյսիւրանտ ուղարկվում է ձրկապէս:
6 (6)-1

ԴԵԿՏԵՐԵՐԻ 26.		ՏԵՂԵԿԱՑՈՒՑ		ԹԻՖԼԻՍ 1877.	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՆ	ՓՈՍՏ
(Գեկտեմբերի 26-ին)				Թիֆլիսից մինչև Փոթի (համապարհապետների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան մինչև Միխայիլով (խառն գնացքը) երեկոյան 5 ժամ. 18 րոպէ:	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լրագրիներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան: Ի ռուսաստանից և Արտաստանից ամեն ի փօստը ստացվում է թիֆ- լիսում ամեն օր: Բա- ղուի տրակտից երե- շաբթի և չաբթի օրերը Երևանի տրակտից եր- կուշաբթի, հինգշաբթի և չաբթի. Փոթի-Թիֆլի- սի տեւան երկաթուղուց ամեն օր Նուսու տրակ- տից չորեքշաբթի և կի- րակի, Երևանի Երևան տրակտից երեշաբթի և չա- բթի:
Ու կիւն (պոլուպրիսալը)	8	25	Կովկասի և Ան- դրկովկասի քա- ղաքների	Թիֆլիսից . . . 9. 21	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լրագրիներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան: Ի ռուսաստանից և Արտաստանից ամեն ի փօստը ստացվում է թիֆ- լիսում ամեն օր: Բա- ղուի տրակտից երե- շաբթի և չաբթի օրերը Երևանի տրակտից եր- կուշաբթի, հինգշաբթի և չաբթի. Փոթի-Թիֆլի- սի տեւան երկաթուղուց ամեն օր Նուսու տրակ- տից չորեքշաբթի և կի- րակի, Երևանի Երևան տրակտից երեշաբթի և չա- բթի:
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—	Պետաստան	Գորի . . . 11. 58	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ. Ուրբաթ. վերմի- նից ներքին հ. Բախուտով մա- նկաբճութեան, կանանց և երեխաների հ. Բուշարեանց սիֆիլիտական և միջային գործարանների հ. Շաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Հին 20 կ. 72 պր. 1000 մ.	1205	—	Աւստրիա	Միխայիլով . . . 1. 29	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Վերջինի 50/100 առաջի փո- խաւութեան տու. 100 մ.	228	—	Ֆրանսիա	Թիֆլիս . . . 6. 47	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Ներքին 50/100 վերջինի	225	—	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 40	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Մարտիկ կուրսը 248—	100	—	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	72	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Վենայի կուրսը ամէ 121 գլ.	100	—	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Գուրեմի բարձր.	5	50	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Աւստրական բանկի ալ- ցիան 200 մ.	265	—	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ներքին հիւանդութիւններ, քուշա- րեանց վիրաւորական և ականջի հ. Սօխովի երե- նեքին հ. Բէյի աչքի հ. Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկա- բարձութեան, Բախուտ սի- ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. վերմի- նից ներքին հ. Գուրբիլ Սօխովի վիրաւորական հ. Հին զաբթի. վերմի- նից ներքին հ. Կ. Բախու- տով կանանց և ջղային հ. Բախուտ վերաբերական և կա- շու հ.
Փոթի Թիֆլիսեան երկա- թուղու ալցիան 125 մ.	125	—	Ֆրանսիա	Փոթի . . . 9. 31	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Ի լիւն շաբթի. վերմի- նի և Գօրաբիլից ն